ԳԱԲՐԻԷԼ ԱԼԹՈՒՆՃԵԱՆ *Թէոդոսիացի, որ ձեւացեր էր Դաւիթ Սահառունի:*

ԲԱՐՍԵՂ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ *Երեւանեցի, որ ձեւացեր էր Պօղոս Աղա:*

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԱՒՈՒՏԵԱՆ *Խարասուցի, որ ձեւացեր էր Մարգար:*

ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱՐԵՈՒՏԱՐԵԱՆ *Գրիգորուպօլսեցի, որ ձեւացեր էր Փասքալ:*

ԿՈՍՏԱՆԴԻՆ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ *Կորեցի, որ ձեւացեր էր Աբգար պէյ:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԼԻՆԵԱՆ *Խարասուցի, որ եղեր էր Յակոբիկ եֆենտի:*

ՆԵՐՍԷՍ ՄԱԶԵՐՈՎ *Թէոդոսիացի, որ եղեր էր Պապուճան:*

ՄԱՐՏԻՐՈՍ ՊԻՃՈՅԵԱՆ *Նախիջեւանեցի, որ եղեր էր Սեդրաք:*

ՄԱՆՈՒԿ ՊԱՊԻԵԱՆ *Խարասուցի, որ եղեր էր Կիրակոս:*

ԳՐԻԳՈՐ ԹԷՐԶԵԱՆ *Ամասիացի, որ եղեր էր Մրտոյ:*

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱԼԹՈՒՆՃԵԱՆ *Թէոդոսիացի, որ եղեր էր Պուալեն:*

ԾԻԱԾԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՏՈՒՐՔԵՐՈՒՆ ԱՒԵԼՆԱԼԸ.

Կայսերական հրովարտակով անցեալ դեկտեմբերի 30-ին որոշուած է որ տէրութեան տուրքերը մէկ մէկ քիչ աւելնան, որովհետեւ տէրութեան եկամուտներն ալ (մասնաւորաց եկամուտներուն պէս) չեն բաւեր եղած ծախքերուն՝ ամէն բանի գինը եւ աշխատաւորաց վարձը առաջնոյն վրայ շատ աւելի լինելուն պատճառաւ: Բարձրացած տուրքերն են դրուագաւոր (կէրպօվոյ) թղթերուն գինը, փրկանաւոր նամակներուն ու ղրկուած բաներուն տուրքը, գլխահարկը եւ մաքսերը: Այս մաքսերուն աւելնալը հարիւրին 5 է միայն, իսկ գլխահարկը գրեթէ հարիւրին 10:

Թրիմու բնակիչներուն համար աւելցած գլխահարկին ցուցակը այս է.

	Ր.	Կ.
Թրիմու Թաթարներէն առնուելու գլխահարկն է մաղդ գլուխ	—	75
Արքունի գիւղականներէն ու գաղթականներէն	2	85
Հասարակ քաղաքացիներէն (մեշչանիներէն)	2	50
Հայ քաղաքացիներէն՝ տան գլուխ	2	10
Հոռոմ քաղաքացիներէն՝ տան գլուխ	1	60
Քաղաքացի Թաթարներէն » »	1	5

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ.

Կայսերական հրամանաւ հրատարակուեցաւ տէրութեան տարեկան եկամտից ու ծախուց ցուցակը՝ հասարակաց տեղեկութեան համար:

Այն ցուցակին գլխաւոր յօդուածները սոքա են.

ՄՈՒՏՔ.	Ր.	Կ.
Գլխահարկ	55,255,929	63
Բաժ. կամ մաքս յրմպելեաց	123,022,580	70
Աղէն առնուած տուրք	9,500,000	—
Մաքս	31,800,000	—
Նամակներէն	7,044,532	—

ԵԼՔ.	Ր.	Կ.
Ներքին եւ արտաքին պարտուց վճարք	54,296,187	91
Կայսերական պալատին ծախք	7,957,905	42
Ազգային Լուսաւորութեան ոստիկանարանին	4,456,824	5
Պատերազմի ոստիկանարանին	106,575,892	39
Զինուորական ուսումնարանաց	3,535,959	7
Ծովամարտիկ զօրաց ոստիկանարանին	20,559,830	74
Ներքին Գործոց ոստիկանարանին	7,477,206	31
Հարաւային Ռուսիա բնակելու եկողներուն	1,375,000	—

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՆԻԲՈԼԱՑԵՎ.

Շատ տարիներէ իվեր ճանչցուած էր թէ նոր Ռուսիոյ քաղաքներէն մէկուն մէջ պէտք է համալսարան մը բանալ: Օտեսսայի լիկէոնը համալսարանի փոխելու խօսք մը կար, բայց կերեւի որ Օտեսսայէն աւելի յարմար երեւցեր է այս բանիս Նիքոլայեվ քաղաքը, որ նոր Ռուսիոյ ուրիշ քաղաքներէն աւելի կեդրոնական տեղ կյարմարի. դիրքը ծովահայեաց, օդը բարեխառն, բնակչաց բազմութիւնը չափաւոր, եւ արդէն աստղաբաշխական դիտարանով ու հասարակաց գրատունով մը զարդարուած: Նիքոլայեվ քաղաքը Սիմֆերոփոլէն 308 վերսթ միայն հեռու է, Օտեսսայէն 120, Քերսոնէն 62, Կատարինապալաւէն 370, Քիշնեւէն 283: — Այս առաջարկութիւնն ըրեր է Վսեմափառ Կայսրեղբայրը Կոստանդին Նիքոլայեվիչ, եւ Վեհափառ Կայսրը բարեհաճեր է հաստատել. այժմ Խարքովի համալսարանին քաջ վարժապետներէն մէկը՝ Պ. Ֆոյկթ՝ յուղարկուեր է Նիքոլայեվ որ համալսարանին համար պէտք եղած պատրաստութիւնները տեսնէ: — Տարակոյս չկայ որ այս համալսարանը շատ օգտակար պիտի լինի Նոր Ռուսիոյ բնակիչներուն: